Շրջակա միջավայրի նախարարության

Գլխավոր քարտուղար պարոն Ս. Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**

Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ, «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի (UNCCD) ազգային համակարգող):

**2. Գործուղման վայրը ժամկետները**

Հնդկաստանի Դեհրադուն քաղաք, 2024 թվականի հունվարի 13-ից 20-ը:

**3. Հրավիրող կողմը**

«Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն՝ Հնդկաստանի Հողերի կայուն կառավարման Գերազանցության կենտրոնի, Անտառային հետազոտությունների և կրթության խորհրդի և G20 նախաձեռնության հետ համատեղ:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Հողերի դեգրադացիայի դինամիկան և վերականգնումը հեռահար զոնդավորման և երկրատեղեկատվական համակարգերի (GIS) միջոցով» վերապատրաստմանը: 520 դիմում հայտերից ընտրված 20 ներկայացուցիչները ներկայացնում էին տարբեր երկրների նախարարություններ և կրթական ինստիտուտներ: Վերապատրաստման թեմաներն էին.

- հողերի դեգրադացիայի ինդեքսների և չափանիշների գնահատում, ծանոթացում հողերի դեգրադացիայի վաղ նախազգուշացման համակարգերի և կիրառման շրջանակի հետ,
- հեռահար զոնդավորման տվյալների օգտագործումը հողերի ծածկույթի դասակարգման համար, հողերի դեգրադացիայի մոնիտորինգի գործիքակազմի (TRENDS.EARTH) ուսումնասիրությունը և դրա կիրառումը հողերի ծածկույթի դասակարգման համար,
- ծանոթացում արբանյակային տվյալների կիրառմամբ՝ բուսականության դինամիկան և հողօգտագործման փոփոխությունները ուսումնասիրելու մեթոդներին,
- ծանոթացում QGIS ծրագրի կիրառման հնարավորություններին:

**5. Քննարկված թեմաները**

Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքները կիրառելու և զարգացնելու նպատակով վերջին օրը մասնակիցները բաժանվեցին 2 խմբի, յուրաքանչյուրին տրվեց գործնական աշխատանք, որի ընթացքը կվերահսկվի և կուղղորդվի համապատասխան փորձագետների կողմից՝ ամենամսյա հեռավար հանդիպումների միջոցով: Մասնակիցների կողմից գործնական աշխատանքի արդյունքը կներկայցվի վերապատրաստման հաջորդ փուլին:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Վերապատրաստման պաշտոնական բացման արարողությանը ելույթով հանդես եկավ Հնդկաստանի Հողերի կայուն կառավարման Գերազանցության կենտրոնի գլխավոր տնօրեն Կանչան Դևին: Ողջունելով մասնակիցներին, խորհրդատվական աջակցության պատրաստակամություն հայտնեց բոլոր մասնակիցներին դասընթացի ընթացքում, ինչպես նաև ավարտից հետո: Կենտրոնի Փակման արարողությանը միջազգային հարաբերությունների տնօրեն Վինայ Կումարը հանձնեց հավաստագրեր:

**7.Հանդիպմների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կազմակերպիչների կողմից որոշվեց վերապատրաստման արդյունավետության բարձրացման համար նախատեսել շարունանական վերապատրաստումներ, մասնակիցների գիտելիքները հասցնելու որոշակի մակարդակի, ինչը թույլ կտա մասնակիցներին իրենց երկրներում համապատասխան գործընկերներին փոխանցել ստացած գիտելիքները:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Մասնակիցների կողմից կազմակերպիչներին առաջարկվեց դիտարկել ընտրված երկրներում թեմատիկ վերապատրաստումների հնարավորությունը, ինչը դրական ընդունվեց կազմակերպիչների կողմից, առաջարկը կքննարկվի համապատասխան կառույցների հետ՝ անհրաժեշտ ֆինանսավորում ապահովելու համար:

Գործուղվող՝ Նարինե Հակոբյան

01.02.2024թ.